

ՉԱՓԱՍՈՍ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԸ ՈՐՊԵՍ ՍԳՈ ԵՐԳԵՐԻ
ՎԻՄԱԳԻՐ ՏԱՐԱՏԵՍԱԿ

Ե. Լ. ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ

Գերեզմանաքարերի վրա պահպանված արձանագրությունների հավաքամբ և ուսումնասիրմամբ զբաղվել են հայրենագետներ Ղ. Ալիշանը, Հ. Աճեմյանը, Գ. Հովսեփյանը, Հ. Քոսյանը, Մ. Աղավունին, Ծ. Փյոմուրճյանը, Ծ. Լալայանը, Ծ. Շահազիզը, Ավ. Եղգարյանը, Ա. Սյուրմեյանը, Գ. Գասպարյանը, Հ. Խոշյանը, Մ. Բարխուդարյանցը, Ս. Գևորգյանը և ուրիշներ: Գավանաբանական ոգով, զբաղարով զբված տապանագրերի հետ հանդիպում են նաև խոսակցական լեզվով ու ոճով հորինվածները:

Գտնում ենք, որ շափածո տապանագրերը աղերսվում են ժողովրդական սգո երգերին և կարող են համարվել բանահյուսական ստեղծագործություններ: Ինչո՞ւ:

ա. Նախ՝ այդ տապանագրերը, բնականաբար ունենալով հեղինակ, նրա անունը հայտնի չեն դարձնում սերունդներին: Բացառություն են կազմում արքատիրոսի ձեռով հորինվածները, որոնք պարունակում են գրողի անունը:

բ. Այս ստեղծագործությունների անհատական շնչերը հաճախ խամրում, տեղի են տալիս ժողովրդի կողմից ընդունված, հավանության արժանացած պատշաճ մտքերի ու արտահայտչանքների կանոնիկ կառուցվածքների ազդի: Գերեզմանագրերի մեծ մասն ունի իր բանաձևային սկիզբն ու վերջաբանը, արտահայտվող մտքերի կայուն հաջորդականությունը, որոնք գրանց հատուկ ժանրային առանձնահատկություններ են հաջորդում: Մահը բնութագրող այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «Ե՛հար խորշակն, թառամեցաւ ծաղիկն»¹, «Փշեց յանկաթժ աշնան խորշակն»², «Ինչպէս փշեց այն մահաբեր խորշակը»³, «Ի սայր անգութ գերանդունն ի ճարակ գոյով մահուանն»⁴, «Սուսեր հատու տխուր մահուան կտրէ գկեանս ազգի մարդկանն»⁵ սփռված տապանագրերի մեծ մասի մեջ: Ընգհանուր է նաև հանդուցյալի կենդանի հոգու համար աղբիւտ, ողորմի տալու հրավեր-խնդրանքը: «Ըս կարօս եմ մէկ հայր մերի»⁶, «Միաբերան տուք զողորմիս»⁷, «Որք հանդիպիք սույն այս շիրմիս, Խրոխտ սրտի տուք զողորմիս»⁸, «Աստուած ողորմի՛ ըսէ, ով անցորդ...»⁹, «Հագիխ համար աղօթքի մէկ բառ ալ կուզեմ միայն»¹⁰ և այլն:

Չափածո տապանագրերը ունեն ևս մի ընգհանրական առար՝ կյանքի ունայնությունը չբարձրելու, անմեղսունակ հոգու հավերժությունը ապահովելու խորհուրդը: «Հողիդ մեղաց մաքոր պահէ»¹¹, «Թառ հոգիս սնդին, մարմինս ի խոպան»¹² և այլն:

Ընդ այս տապանաւ յուսով նորազին
Յաւերժ պարճանօք ի խաղաղ հանգչին
Ոսկեբք իշխանին Բաբոյի Արժուունայ
Որ տանս Հայկազանց էր նրազ լուսայ¹³:

¹ Հ. Քոսեան, Բարձր Հայք, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 304:

² Գ. Գասպարեան, Հ. Խոշեան, Ազգային գերեզմանատուն հայոց Շիրազի, Կ. Պոլիս, 1922, էջ 248, այսուհետ՝ ԱԳՀԵ:

³ Հնասէր, Հայ գրականությունը տապանաքարերու վրայ, «Բազմավէպ», 1929:

⁴ Նույն տեղում, էջ 146:

⁵ Մ. Աղավունի, Միաբանք և այցելուք հայ երուսաղէմի, Երուսաղէմ, 1929, էջ 106:

⁶ Հնասէր, նշվ. աշխ., էջ 21:

⁷ Հնասէր, նշվ. աշխ., «Բազմավէպ», 1928, էջ 340:

⁸ Ծ. Լալայան, Վասպուրական, Ազգագրական հանդէս, գ. 21, էջ 95, այսուհետ՝ ԱՀ:

⁹ Հ. Քոսեան, Գերեզմանատուն Կաթողիկէ հայոց Կ. Պոլսոյ, Կ. Պոլիս, 1931, էջ 125:

¹⁰ Հնասէր, նշվ. աշխ., «Բազմավէպ», 1929, էջ 146:

¹¹ Նույն տեղում, էջ 21:

¹² Նույն տեղում, էջ 19:

¹³ Ծ. Լալայան, Սևան, ԱՀ, գ. 17, էջ 83:

Սա տապանագրի ամփոփ դառական ձև կարելի է համարել, որովհետև և՛ տապանի ներքո ոսկորների խաղաղ հանդչելու, և՛ նորոգվելու, վերակենդանանալու հույսի, և՛ հանգուցյալի՝ ճրագ, լույս լինելու մտքերը հատկանշական են տապանագրերի մեծամասնությանը:

Գ. Ինչպես ժողովրդական երգն է անցնում բերնբերան, հղկվելով տարածվում ու ընդհանրանում, այնպես էլ շատ տապանագրեր անցնում են քարից քար, հարմարեցվում կոնկրետ դեպքին ու անձնավորությանը:

Այս էն ապացուցում տարբեր գերեզմանաքարերի վրա, անգամ տարբեր գերեզմանոցներում հայտնաբերված նույն տապանագրերը:

Երբեմն մառց էի ես ձեզի պէս,
Այժմըս եղայ ես հողի պէս
Ես չի պիտի բլլամ ձեզի պէս,
Գուց պիտի բլլամ ինձի պէս:

Տապանագիրը նոր նախիջևանի ս. Նիկողայոսի գերեզմանատեղից գրի է առել Ծ. Շահագիրը: Սա Շիրշիի հայոց գերեզմանատանը ունեւր այս տեսքը.

Մառց մըն էի ձեզի պէս
Հիմայ եղայ հողի պէս
Գուց ալ պիտի բլլամ ինձի պէս¹⁴:

Արցախի Աշան գյուղի հին գերեզմանոցում մեզ վիճակվել է նույն տապանագիրը կարգաւ երկու տարբեր (Աշոտի և Ավագի) գերեզմանաքարերի վրա.

Գնացի անդա՛ռ շատ հեռու աշխարհ
էլ յետ դառնալու շկայ ճանապարհ:
Իզուր է սգալ, անել լաց, կական;
Այսպէս է կեանքը բոլոր մարդկութեան:
Այս է մեր տունը, մեր վերջին տեղը,
Այստեղ պիտի գան խեղճն ու ուժեղը:

Գ. Տապանագրերը մի շարք մտտիվային ու կառուցվածքային ընդհանրություններ ունեն ժողովրդական սգո երգերի հետ:

Եկան գերեզմանաքարեր, որոնց վրա քանդակված են շատ նուրբ հայկական խաչեր ու գեղեցիկ նախշեր, սուգ անող կանանց արտասանած խոսքերը, շնորհակալական արտահայտություններ՝ արժանի մարդկանց, հասարակական առաջավոր գործիչների, քարեգործների հասցեին¹⁵, — գրում է Գ. Գևորգյանը:

Սգո երգերի և տապանագրերի հիմնական տարբերությունը արտահայտության գրավոր և քանավոր ձևերի մեջ է: Ինչպես նույն առիթով ասված խոսքը կամ ելույթը նույն մարդու գրավոր և քանավոր խոսքում անկասկած տարբերվում է, այնպես էլ սրանք, որպես նույն ժողովրդի նույն թեմայով մտածողության արդյունք, գանազանում են զուտ ձևավորման հանգամանքներով: Սգո երգը, որպես քանավոր ստեղծագործություն, ավելի ազատ է, մանրամասնորով հարուստ, առատ ձայնարկություններով, եղանակներով ու հնչերանգով, ավելի հուզիչ է ու կոլորիտային: Տապանագիրը, ի սկզբանե հորինվելով որպես գրավոր հուշարձան, մանավանդ այնպիսին, որ քարի վրա փորագրվելով՝ կարող է պահպանվել դարեր, ձգտում է սեղմության, ասելիքի հստակության, կարևոր մտքերի շեշտման, մանրամասնություններից ձերբազատման: Այն ավելի դատողական է, ունի հանդիսավոր ոճ և ընդհանուր բնույթ:

Ժողովրդական սգո երգերն ու տապանագրերը ունեն հետևյալ ընդհանրությունները: Տապանագրերը սգո երգերի պես հորինվում են երկու ընդհանուր ձևով. 1. հանգուցյալի անունից, 2. սպացողի անունից, որը դիմում է. ա. հանգուցյալին, Բ. անցորդներին (սգվորներին):

Առաջինները արտահայտում են կարճատև կյանքի հուզիչ պատմություն, կյանքից հեռանալու ցավ, մահվան բերած դժբախտության խորություն.

Անակեկալ հարուժճ անզուր
Կենացա արեւս մաբեցին,

¹⁴ Նման տապանագրեր կան նաև Հնասերի (Եջվ. աշխ., էջ 339) և Ե. Փյամուրջյանի (Ստամպուլույ պատմութիւն, հ. Բ, Վիեննա, 1932, էջ 656) գրառումներում, նաև՝ ԱԳՂԵ, էջ 204, 224:

¹⁵ Գ. Գևորգյան, Ղլլար, Հայ ազգագրություն և քանահայտություն, պրակ 16, Երևան, 1980, էջ 58:

Ջաշխարհս ունայն բողոյս շէ փոյր,
Որդիքս անմայր մնացիւն¹⁶:

Երկրորդների ա. խումբը, գիմելով հանգուցյալին, նշում է նրա բարեմասնութունները, աւելիս ապրած կյանքի ու մահվան գեհնատականները, նրա հիշատակի հավերժության հույսը: Բ. կարգի տապանագրերում փորձ է արվում այցելուին հասկանալի դարձնել հանգուցյալի կյանքի ու մահվան խորհուրդը, նրա հիշատակի երկարակեցության, հարգանքի արժանավորության կոճակները:

Հօր մօր սիրական կանանշ ուռնին
Մանուան խորշակով գլխիկը ծոնց,
Վախ խորշակահար ուսման ծաղիկին,
Կեանքի հովտին մէջ օծախ մը մարէր...¹⁷

Այսպես սգո երգը հակիրճ պատկերով տեսանելի է դարձնում երևույթի ողբերգականությունը:

Աստուածամօր ծոցուն
Մարգրիտ մ'իկկեր՝ զին շունի:
Երնէկ անոր զոնողին,
Վայ եկեր կոբսեցնողին¹⁸:

Ինչպես սգո երգերի, այնպես էլ տապանագրերի ամենաշեշտված մտտիվը հանգուցյալի արտաքին և ներքին արժանիքների գովերգումն է: Հանգուցյալին գովերգող որոշ տապանագրեր ոչ ձևով, ոչ բովանդակությամբ չեն տարբերվում սգո երգերից: Այս առումով բնորոշ են նոր Ջուղայում քաղված խոջաների տապանագրերը, որոնց հնչիտակն ըստ երևույթին նույնն է: Սըրանք ոճավորված են միջնադարյան դասական ողբերի հանգույն:

Ա իմ աննման խօշայ, որ էիր հայոց քազուոր,
Անուամ Սարֆրագ կաշի, սըքնբաց զօրեղ դատուոր,
Խելօք, քա ճարտար լեզվէտ զարմանար ամէն քազաւոր¹⁹:

Սգո երգերում երիտասարդների մահվան առթիվ շատ տարածված մտտիվը (ըստ որի հարձանիքի փոխարեն մահն է այցելել) իր արտահայտությունն է գտել նաև տապանագրերում:

Փոխան հարսանեաց զգեստուց բնեկաց
Կտաւ պատանաց զքեզ զարգարեաց...²⁰

Նույն զազափարը գրեթե նույն ձևակերպումն ունի նաև սգո երգում.

Այ իմ պատելի որդի
Փեսուրեան էիր արժանի
Այսօր հարսանեացդ փոխան
Կրատաօք թզեզ պատեցին²¹:

Գովքը ծավալվում է, ընդգրկում հանգուցյալի արհեստն ու զբաղմունքը (որին այստեղ մոզիշ արտահայտվելու ձգտումով: Արտաքին գեղեցկությունը երբեմն ներկայացվում է զեզափարչական կապվին հատուկ զույներով ու տեսանելիությամբ:

Շաղ կտամիր կարկերէր յայտիցն զեղանմայ...²²

Գովքը ծավալվում է, ընդգրկում հանգուցյալի արհեստն ու զբաղմունքը (որին այստեղ ավելի շատ է ուշադրություն նվիրվում, քան սգո երգերում), երբեմն տապանագրերին հազորում ժողովրդական վիպական երգերին ու հերոսական անորիին հատուկ պաթետիկ շունշ:

¹⁶ Է. Փօսեան, Բարձր Հայք, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 301:

¹⁷ ԱԳՇԸ, էջ 142:

¹⁸ Լ. Ճանիկեան, Հեուրիւնք Ակնայ, Քիֆլիս, 1895, էրգ 17:

¹⁹ Յ. Ք. Տեր-Յովնանեան, Պատմութիւն Նոր Ջուղայի, Սպահան, 1890, էջ 103, Առ. Մեաքակեյան, Հայրեններ, Երևան, 1905, էջ 541, Կ. Կասաբեանց, Նոր ժողովածու, պր. Ա, Քիֆլիս, 1892, էջ 28:

²⁰ Հնտաւր, Եշվ. աշխ., «Բազմավէպ», 1928, էջ 339:

²¹ Առ. Մեաքակեյան, Հայ միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 360:

²² ԱԳՇԸ, էջ 254:

Ազնի տոնմական՝ իշխան փառաւոր
Ինքնավարժ Եւրտար՝ ի գիտ նորանոր
Սա Լոբի Եսիկին՝ ի յազգէս հանուր
Մեծ վառօղակներ՝ արհալից երգօր,
Եւրպան ազաւնց՝ Եւրտարժ մտաւոր
Ապրին բնդ սորայս՝ վերեւածիր շրեւրհ...²³

Հանգուցյալի կերպարը հյուսվում է պատկերավորման գրեթե նույն միջոցներով, ինչ որ՝ ժողովրդական սգո երգերում և որ հատուկ է ժողովրդական բանահյուսությանն ընդհանրապես՝ ժողովրդի լեզվամտածողության մեջ արմատավորված այնպիսի խորհրդանշաններ, ինչպիսիք են՝ ձին՝ քաջության, վազրը՝ սիրո, ծաղիկը՝ երիտասարդության, աղավին՝ անմեղության, երևան՝ են գալիս ինչպես շիրմաքարերի վրա քանդակված, այնպես էլ տապանագրերի մեջ ակնարկված.

Մեռան սիրած վարդերը մեր

էլ չեն առնի հարություն...²⁴

Ի փրթիլն բառամեցաւ իբրև ծաղիկ²⁵

Եւ այսպէս շուտ խոսաբեցար, սիրուն թոչնիկ²⁶:

Այսպես էլ արևը, լույսը, գարունը, արշակույսը խորհրդանշում են կյանք և ապրելու երջանկություն, իսկ մութը, վերջալույսը, ձմեռը՝ մահ: Մակդիրներն ու համեմատությունները, որոնց համար սնուցիչ հող է բնությունը՝ իր անսպառ թույլանքներով, ավանդական են (ինչպես և սգո երգերում), երբեմն ընտրված ավելի ճաշակով և զգուշությամբ՝ ծաղիկ նունների, կանանչ վարդների, քաղցրիկ աղավնի, դեռափթիթ, ով քաղցրարույր, կուսածաղիկ սրբապուն, անմեղ: հրեշտակ, պայծառ արև, սիրուն թուչնիկ, գանձ մեր փոքրիկ, խորշակահար շուշան և այլն. և այլն:

Պատկերավորման միջոցները գերազանցապես հարաբերվում են հանգուցյալի տարիքի. անձնական հատկանիշների հետ. գործավզող մայր, բազմաշարշար հայր, բարեգութ գործավոր, հեզ պանդուխտ, թերաբաց ծաղիկ և այլն:

Տապանագրերը ևս մեծ մասամբ կառուցված են կյանքի ու մահվան հակադիր պատկերների զուգահեռականությամբ.

Հուր էր համայն, աստ՝ սառնցաւ

Շարժում և կեանք. աստ՝ դադրեցաւ²⁷:

Կամ՝

Լինել ունէիր պսակ պարծաւաց

Արդ եղեր այժմուս՝ բախիծ բախձանաց²⁸:

Դագաղը շրջապատած սզվորների նման տապանագրի հեղինակը ևս ճարտասանական հարցերով դիմում է հանգուցյալին և խոսքնում վիշտն ու թախիծը. «Ձիա՞րդ թառամնալ ի ժանտ խորշակաց», «Ո՞ր թողուցիր մայր, քոյր, եղբայր յուսահատ, է՞ր կրքեցար խոնարհ, շուշան անարատ»:

Չափածա տապանագրերի նկատելի առանձնահատկությունը՝ նույնահանգությունը, ազերովում է ոչ միայն սգո երգերին, այլև հայկական ավանդական ժողովրդական բանաստեղծությանն ընդհանրապես²⁹:

²³ Տե՛ս ԱԳՆԸ, էջ 164, 212, 294, Ե. Քյումուրեան, նշվ. աշխ., էջ 679, Լ. Փօսեան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 109, Ե. Լալայան, Գանձակի գավառ, Երվեր, հ. 2, Երևան, 1988, էջ 233, Յ. Ք. Տէր-Հովհաննէան, նշվ. աշխ., էջ 215, Լ. Ճանիկեան, նշվ. աշխ., երգեր 27, 39, 62, 85, 94, Ի. Քոչալայան, Նշխարներ Համշենի և Տրապիզոնի բանահյուսության, Երևան, 1986, էջ 86, Գ. Կրիգորյան, Հատերտիր հայ ժողովրդական բանահյուսության, Երևան, 1956, էջ 319 և այլն:

²⁴ Ստեփանակերտ, Եղբայրական գերեզմանաց, անձնական գրառումներ:

²⁵ ԱԳՆԸ, էջ 154:

²⁶ Ե. Քեօմուրեան, Ստամպուլոյ պատմութիւն, հ. Բ, Վիեննա, 1932, էջ 645:

²⁷ Նույն անգում:

²⁸ Հնասէր, նշվ. աշխ., Վարդավազ, 1928, էջ 310:

²⁹ Լ. Փօսեան, Բարձր Հայք, հ. Բ, էջ 91—93, 108, 114, 115, 125, հ. Ա, էջ 191, Ե. Լալայան, Վասպուրական, ԱԸ, գ. 21, էջ 94, Լ. Ճանիկեան, նշվ. աշխ., Առ. Մնացականյան, նշվ. աշխատություններ, Գրիգոր Նարեկացի. Մատենան ողբերգութեան, բան ԻԶ:

Մի՛ զիս լացցէ, երգի՛չ Կողբան,
Լի՛ սոխակին աչ՛ ծառան,
Այլ ծնազացս իմ յարժամ
Եւ ազգակցացս ամենայն,
Մի՛ և կտրապէն ջղբաձայն,
Մի՛ և տատրակն քաղցրածայն
Այլ սիրողին իմ սիրական...³⁰

Այս տապանագրում կան և՛ գողթան երգիչների հիշողությունը, և՛ ժողովրդի սիրած թռչուններ առխակն ու տատրակը, և՛ «սուրն մահուան»՝ ըստ հին ժողովրդական հավատալիքի, և՛ տըխրական ոսկորների մինչև համայն հարությունը հանգչելու ընդունված գաղափարը: Սա թերևս մի շատ հին ողբերգ է, որ արձանագրվել է տապանաքարին:

Սգո երգերի և տապանագրերի մեկ այլ ընդհանրությունը հանգուցյալի կյանքի մասին տեղեկություններ հաղորդելն է: Սգերը դա անում է շատ հարեանցի, երևակայության թռիչքներով համեմած՝ ավելի շատ վեր հանելով կյանքի զգայական ու գաղափարական կողմերը: Տապանագրերը, ավելի մասնավորելով խոսքը, երբեմն տալիս են կենսագրական փաստացի տեղեկություններ³¹, Տապանագրերը հաճախ անդրադառնում են պատմության էջերին՝ մեր առջև բանալով հետաքրքիր դրվագներ, բազմապիսի ճակատագրեր: Ինչպես հայրենանվեր հերոսի մասին հյուսված ողբերը, նույնպես և քննարկվող ստեղծագործությունները տարբերվում են սովորական մահականացուների մասին հորինվածներից, արտահայտում խոնարհում ու ակնածանք:

Անցո՛րդ, խոնարհվի՛ր
Շիրիմի՛ն Բաշի,
Կյանքը նա զոհեց
Հանուն Արցախի³²:

Ի տարբերություն մահերգի, մահվան կերպարը և մահացողի պատկերը ավելի որոշակի է դրսևորվում այստեղ: Այն նման է գիշերվա մեջ մարդը ասուպի, կերուխումին խառնվող թույների, արմատից պոկված ծաղիկի, խամրող փառքի: Մահը հատու սուսեր ունի կամ սուրսույր գերանդի, որով հարվածում է անվրեպ: Սրբեմն, ինչպես մահերգում, հակիրճ ակնարկվում է մահվան պատճառը:

Մինչ արեգի նշոյլէ փայլուն
Երկրիս ետև խոնարհած
Մինչ գեղգեղէր փոքրիկ բուշուն
Կյանքը նա զոհեց
Հանուն Արցախի³²:

Պանդխտության երևույթը մի այնպիսի եզրբերություն է եղել հայ ժողովրդի կյանքում, որ կազմելով բանահյուսական առանձին ժանր, թափանցելով սգերգության ոլորտ՝ ակնառկվում է նաև տապանագրության մեջ: Պանդխտի մահը տարբերակվում է հայրենիքում տեղի ունեցած մահից: «Ոհ, պանդխտության դառն ճակատագիր»³⁴, «Կարօտ հայրենիքի 17 տարի»³⁵, «Անաղ կանքս պանդուխտ տարտեցի»³⁶, «Կարօտ հայրենեաց անձկալիք հոգիս»³⁷ և այլ արտահայտություններ ներկայացնում են ցավի մեջ ցավ, կարոտախտի անսփոփ վիշտ: Երբեմն հորինողը վերանում է անհատական դեպքից, երևույթը քննում որպես համընդհանուր շարիք, հային բաժին հասած կենսավեր արհավիրք, խորհուրդ տալիս օտարության մեջ դեզերող ազգակիցներին ամեն գնով հայրենիք վերադառնալու:

Տապանագրերում առանձնակի շնչտեք են կրում բարոյախրատական որոշ գաղափարներ: Ինչպես վշտոտ սզվորն է զգում պատմելու և հոգին դատարկելու պահանջ, նույնպես տապանագրողը, իմաստնանալով մահվան մոտիկությունից, կարիք ունի խորհուրդ տալու: Գրեթե յուրաքանչյուր մահարձան իր պատվիրաններն է տալիս, որոնք սակայն խաշածեվում են նույն հանգուցակիտի շուրջ: Կյանքը անցողիկ է, մահը՝ ամենադուր, այս անխուսափելի պարտության պարագայում լավագույնը բարի հիշատակ թողնելն է:

³⁰ Ե. Լալայան, Զավախք, Երկեր, հ. 1, Երևան, 1983, էջ 206:

³¹ Զ. Քոսեան, Գերեզմանատուն կաթողիկե հայոց Կ. Պոլսոյ, էջ 169, Նույնի՝ Բարձր Հայք, հ. Բ, էջ 100, Ե. Լալայան, Երկեր, հ. 2, էջ 253, ԱԷ, Գ. 17, էջ 83, ԱԳՇՇ, էջ 212 և այլն:

³² Ստեփանակերտ, Եղբայրական գերեզմանոց, անձնական գրառումներ:

³³ ԱԳՇՇ, էջ 273:

³⁴ Նույն տեղում, էջ 233:

³⁵ Նույն տեղում, էջ 226:

³⁶ Նույն տեղում, էջ 209:

³⁷ Նույն տեղում, էջ 176:

Ուշափ աշխարհի խաբուսիկ փառաց
Սնտոի յոյսեր պաշարեն քո սիրտ,
Փիտցիր, որ ասէն այդ վայելք կենաց
Ունայն են, Ե՛վ մարդ, այս է քո ճանգիստ³⁸:

Ռուրը հող են դառնալու, գերեզմանը գերում է ամենքին, ունայն ու սուտ են փառքն ու հարջատութիւնը, մարդիկ անցնում են սովորների պես, մահվան առաջ հավասար են մեծն ու փոքրը, իմաստունն ու քաղաքիւրը, պատրանք են բերկրանքն ու ցավը, հաստատուն են ճշմարիտ է միայն մահը. «Այսօր ինձի, վաղն՝ ձեզի»³⁹: Միակ բանը, որ խնդրում է խաղաղ հանգչող հանգուցյալը, մի բերան ողորմին է, մի երկու կաթիլ արցունք, որ կմխիթարեն իրեն:

Տապանագրի հիմնական նպատակը հարազատների վշտի մեղմացումն է և հանգուցյալի հիշատակի երկարակեցութեան ապահովումը: Ըստ հայ ժողովրդի սովորութեան, գերեզմանաքարը կանգնեցվում է տապանագիրը գրվում կամ խմբագրվում է մահվան տարեկիցին, երբ սուգը մեղմացած է լինում, և զգացմունքները ընկրկում են դատողականութեան առաջ:

Խնդրո առարկա ստեղծագործութիւններում, ինչպես սգո երգերում, արտացոլված ենք տեսնում մահվան հետ առնչվող հայ ժողովրդական որոշ հավատալիքներ ու սովորութիւններ: Նախ՝ շատ է հանդիպում մարմնի մահկանացու լինելուն հակառակ հոգու անմահութեան հավատը. մարմինը հանգչում է քարի տակ, իսկ հոգին սավառնում է երկնքում:

Սլացար անդարձ յանմահիցն երամ
Առնուլ զպսակ քաւեացց անդարամ⁴⁰:

Բազմաթիւ են նաև Արարչի կամ Յիսուսի վճռի, Գարբիւլ հրեշտակագետի, հրեշտակների՝ մահվան գործում կատարելիք դերի, մահվան և հարութեան փողերի հնչման, սև և կարմիր դավթարների, վերջին դատաստանի ակնարկումները: Գրեթե բոլոր տապանագրերը ունեն հանդերձալ հավերժական կյանքի հույս, որը գտնվում է անթերի բարձրերում: Մահը այցի է գալիս երկնային հրամանով՝ ըստ կանխորոշված ճակատագրի, և անհեթիթութեան են նրան դիմագրավելու փորձերը: Նույն անելանելիութիւնն է հաստատում սգո երգը:

Գիտեմ, ուր մարդուէ եկեր,
Լամ, քերիմ ալէմս ի վրայ:
Ան ուր Աստուծու եկեր,
Ինչէի լամք, ուր շէմը չիմ անայ:⁴¹:

Այսպես տապանագրերի մեծ մասը փորձում է համոզել, որ անօգուտ և ավելորդ է լալ, արցունք թափել, բայց և հաստատում է ողբերգելու, լաց ու կոծ անելու սովորութեան առկայութիւնը: «Բարձէ՛ք, եղերգութ, ողբագին կական»⁴²:

Այստեղ տարողունակ արձագանքներ ունի նաև արեակաշտութիւնը, արևը կյանքի խորհրդանիշ համարելը: Շատ տապանների ներքո ոսկորների կամ մարմնի փոխարեն այս կամ այն մարդու «արևն» է հանգչում: Երիտասարդը ոչ թե ապրում էր, այլ արևի պես փայլում: Մահացողը երազում է հանդերձալ կյանքում նույնպես արև ունենալ՝ շխարհիկ արև, նա արևի մտ է գնում:

Անարգեցի զարե կենաց մի օրեայ,
Ճիշմ յեթեր վազամեռիկ ճնգամեայ
Ի վայելել յակն արեու մշտակայ...⁴³

Եվ ամպշտագրերով, և սգո երգերով ճանգուցյալի ճարագատները փորձում են իրենց վիշաք դույզն-ինչ մեղմացնել, իմաստավորել մահացածի ապրած կյանքը. զննատել նրա կատարած ու կիսատ բազած գործերը. արտահայտել իրենց երբեմնի ճագրեն ու երագները՝ կաղված ճեռացողի հետ. հրա մահվան իրողությունից լուրած դասը ճաղողի ողբերին: Այս միառնակիտ նպատակները, նույն թման ևս կյանքի նույն քնագավառը շոշափելու ճանգարձնը սգերգութիւնն ու ամպշտագրութիւնը սերտաբեն մերձեցնում են իրար և՛ քաղաքագետի, և՛ պատկերավորման, և՛ գաղափարական ու մտափայլի առումներով:

³⁸ Հ. Քոստան, Բարձր Հայք, հ. Ա, Վիեննա, 1925, էջ 286:

³⁹ Հնատէր, Եղվ. աշխ., «Բազմավէպ», 1929, էջ 21:

⁴⁰ Հ. Քոստան, Գերեզմանատուն կաթողիկէ հայոց կ. Պոլսոյ, էջ 101, 107, 125, նույնի՝ «Բարձր Հայք», հ. Ա, էջ 125, Հ. Ճանիկեան, Եղվ. աշխ., երգ 10, 108 և այլն:

⁴¹ Հ. Ճանիկեան, Եղվ. աշխ., երգ 23:

⁴² Հնատէր, Եղվ. աշխ., «Բազմավէպ», 1928, էջ 150, 310:

⁴³ ԱԳՇԸ, էջ 103:

Տապալանագրերը հարինվում են կա՛մ հանգուցյալի արևէ հարազատի կողմից, կա՛մ նրանց պատվերով ու ասելիքի բեղադրանքով: Այս պարագան տապալանագրությանը հաղորդում է բանահյուսական արժեք է դարձնում ժողովրդական ստեղծագործության մի ուրույն բնագավառ:

Ե. Լ. АРУТЮНЯН—Стихотворные эпитафии как разновидность скорбных песен.—

Жанр эпитафии имеет коренную общность с жанром скорбных песен: одинаковую основу возникновения—человеческая смерть; одинаковый аспект ее отражения—религиозно-трагический; одинаковый характер лирических героев—исключительно героические, мотивные сходства, одинаковые изобразительные средства.

Стихотворная эпитафия—высеченное на надгробном камне анонимное художественное произведение, преследующее цель: а) осмысление значности личности покойного; б) ее уроки для окружающих; в) размышления о суете жизни и о вечности.